



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎՃԱՐՈՒՄ (JOBKEEPER PAYMENT)

Աշխատանքի պահպանման վճարման (JobKeeper Payment) համաձայն, իրավասու ընկերությունները, որոնք տնտեսական վնաս են կրել կորոնավիրուսի հետևանքով, կարող են օգտվել կառավարության կողմից տրվող աշխատավարձի նպաստից՝ շարունակելու վճարել իրենց աշխատողներին:

Վնաս կրած գործատուները կարող են պահանջել \$1,500 վճարում երկու շաբաթը մեկ անգամ յուրաքանչյուր իրավասու աշխատակցի համար 2020թ.-ի մարտի 30-ից մինչև 2020թ.-ի սեպտեմբերի 27-ը:

Աշխատանքի պահպանման վճարումը ապահովում է, որպեսզի գործատուները կապված մնան իրենց աշխատակիցներ հետ և կօգնի ընկերություններին արագորեն վերսկսել գործունեությունը, երբ ճգնաժամը ավարտվի:

Աշխատանքի պահպանման վճարումը Կառավարության ծրագրի մի մասն է՝ մեղմացնելու կորոնավիրուսի հետևանքով առաջացած տնտեսական վնասը և օգնելու անցում կատարել դեպի վերականգնում:

### Կարևոր տեղեկություն գործատուների համար

Աշխատանքի պահպանման վճարում ստանալու համար գործատուները պետք է գրանցեն դիմելու մտադրություն Ավստրալիայի Հարկային Վարչության (ATO) կայքում՝ [www.ato.gov.au](http://www.ato.gov.au):

Գործատուները պետք է գնահատեն, արդյոք իրենք ունեն կամ կունենան շրջանառության պարտադիր անկում – փոքր ընկերությունների մեծամասնության համար այն եկամտի կրճատում է 30 տոկոսով կամ ավելի՝ սկսած 2020թ.-ի մարտի 1-ից նվազագույնը մեկ ամսյա ժամկետով:

Շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ներառյալ բարեգործական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ ձեռներեցները (ընկերություններ առանց աշխատողների), որոնք բավարարում են շրջանառության ստուգումները և իրավասության պահանջները, նույնպես կարող են դիմել Աշխատանքի պահպանման վճարման համար:

Որպես գործընթացի մի մաս, գործատուները պետք է տեղեկություններ տրամադրեն Ավստրալիայի Հարկային Վարչությանը (ATO) իրավասու աշխատակիցների մասին: Այն ներառում է տեղեկություն իրավասու աշխատողների թվի մասին 2020թ.-ի մարտի 1-ի դրությամբ և նրանց մասին, ովքեր ներկայումս աշխատում են ընկերության համար (ներառյալ նրանք, որոնց աշխատանքը դադարեցվել է կամ կրկին աշխատանքի են ընդունվել):

Իրավասու գործատուները կստանան առաջին Աշխատանքի պահպանման վճարումը մայիսի առաջին շաբաթից սկսած:

### Կարևոր տեղեկություն աշխատակիցների համար

Եթե դուք աշխատակից եք, ապա ձեր գործատուն կտեղեկացնի ձեզ, արդյոք իրենք պահանջելու են Աշխատանքի պահպանման վճարում ձեր անունից – աշխատողների մեծամասնությունը կարիք չունի ոչինչ ձեռնակելու:

Լրիվ դրույքով և կես դրույքով աշխատակիցները, ներառյալ այն աշխատակիցները, որոնց աշխատանքը դադարեցվել է, իրավասու են ստանալու Աշխատանքի պահպանման վճարում:

Այն դեպքերում, երբ ոչ մշտական աշխատակիցը աշխատել է տվյալ գործատուի համար պարբերական և կանոնավոր հիմունքով առնվազն նախկին 12 ամիսների ընթացքում 2020թ.-ի

մարտի 1-ի դրությամբ, նրանք նույնպես իրավասու կլինեն ստանալ Աշխատանքի պահպանման վճարում: Իրավասու աշխատակիցները 2020թ.-ի մարտի 1-ի դրությամբ ներառում են.

- Ավստրալիայի քաղաքացիները
- մշտական վիզա կրողները
- Հատուկ կարգավիճակի (Ենթադաս 444) վիզա կրողները:

Եթե դուք իրավասու եք, Աշխատանքի պահպանման վճարումը դրամական նպաստ կվճարի ձեր մասնակի կամ ամբողջ եկամտի չափով – ձեր գործատուն պարտավոր է ձեզ վճարել իրենց վճարացուցակի համակարգի միջոցով:

Իրավասու աշխատակիցները կստանան իրենց գործատուի կողմից նվազագույնը \$1,500 նախքան եկամտահարկը երկու շաբաթը մեկ անգամ: Կենսաթոշակի երաշխիքի ոչ մի վճարում պարտադիր չէ կատարել յուրաքանչյուր լրացուցիչ վճարման համար, որը կատարվել է Աշխատանքի պահպանման վճարման պատճառով:

Եթե դուք սովորաբար ստանում եք \$1,500-ից պակաս եկամուտ նախքան եկամտահարկը երկու շաբաթը մեկ անգամ, ձեր գործատուն պարտավոր է ձեզ վճարել նվազագույնը \$1,500 նախքան եկամտահարկը երկու շաբաթը մեկ անգամ:

Եթե Աշխատանքի պահպանման վճարման դիմումը հաստատվի, բայց դուք ներկայումս ստանում եք Աշխատանքի որոնման վճարում (JobSeeker), կամ եկամտի աջակցության այլ վճարում, դուք պետք է տեղեկացնեք Ծառայություններ Ավստրալիա (Services Australia) կազմակերպությանը ձեր դրության փոփոխության մասին, այլապես հնարավոր է պարտի մեջ ընկնեք, որը պետք է ետ վերադարձնեք: